# ՀՈՒՇԱԳԻՐ

## Մեծամոր (Հայաստան) և Պոլյարնիե Զորի (Ռուսաստան) քաղաքների միջև եղբայրական համագործակցության կապ հաստատելու մտադրության մասին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչակազմը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վահրամ Աշոտի Խաչատրյանի և Պոլյարնիե Զորի համայնքի վարչակազմը ի դեմս մունիցիպալ միավորման ղեկավար՝ Մաքսիմ Օլեգի Պուխովի, այսուհետ անվանվող՝ "Կողմեր", պայմանավորվեցին գործընկերության ստեղծման մասին՝ դրանով իսկ համատեղ նպաստելով երկու քաղաքների զարգացմանը:

Հաստատելով բարեկամական հարաբերությունների հետագա ամրապնդման իրենց ցանկությունը իրավահավասարության և փոխադարձ հարգանքի սկզբունքների հիման վրա՝ հաշվի առնելով փոխշահավետ համագործակցությունը զարգացնելու շահագրգռվածությունը, Կողմերը ստորագրեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. Կողմերը մտադիր են համագործակցել հետևյալ ուղղություններով.

- գիտատեխնիկական, հումանիտար, մշակութային և առևտրատնտեսական կապերի ամրապնդում և զարգացում.
- փոխգործակցություն արդյունաբերության, փոքր և միջին բիզնեսի, մշակույթի, կրթության, զբոսաշրջության, երիտասարդական քաղաքականության, սպորտի ոլորտներում:

2. Կողմերը ցանկանում են կիսվել տեղական ինքնակառավարման մարմինների իրենց տարածքում գտնվող ատոմակայանների փոխգործակցության փորձով:

3. Սույն Հուշագրի իրականացման նպատակով Կողմերն իրականացնում են հետևյալ գործողությունները.

- կազմակերպում են պաշտոնական այցեր և

# МЕМОРАНДУМ

## о намерении установить побратимские связи сотрудничества между городом Мецамор (Армения) и городом Полярные Зори (Россия)

Администрация муниципального образования Мецамор Армавирской области Республики Армения в лице главы муниципального образования Хачатряна Ваграма Ашотовича и администрация муниципального образования город Полярные Зори в лице главы муниципального образования Пухова Максима Олеговича, именуемые в дальнейшем: «Стороны», договорились о создании партнёрства, совместно способствуя тем самым развитию двух городов.

Подтверждая своё стремление к дальнейшему укреплению дружеских отношений, основанных на принципах равенства и взаимного уважения, учитывая заинтересованность в развитии взаимовыгодного сотрудничества, Стороны подписали настоящий меморандум о нижеследующем:

1. Стороны намереваются сотрудничать по следующим направлениям:

- укрепление и развитие научно-технических, гуманитарно-культурных и торгово-экономических связей;
- взаимодействие в области промышленности, малого и среднего бизнеса, культуры, образования, туризма, молодежной политики, спорта.

2. Стороны желают поделиться своим опытом в области взаимодействия органов местного самоуправления с расположенными на их территории атомными станциями.

3. В целях реализации настоящего Меморандума Стороны осуществляют следующие действия:

- организуют официальные визиты и рабочие встречи;

աշխատանքային հանդիպումներ.
- անցկացնում են համատեղ միջոցառումներ, այդ թվում՝ շնորհանդեսներ, կոնֆերանսներ, սեմինարներ.
- կազմակերպում են մասնակցություն Կողմերի տարածքում անցկացվող ցուցահանդես - տոնավաճառ միջոցառումներին.

4. Կողմերը տեղեկատվական փոխգործակցությունն իրականացնում են սույն Հուշագրով նախատեսված գործունեության ոլորտներին համապատասխան:

5. Սույն Հուշագիրը Կողմերից որևէ մեկի վրա չի դնում որևէ կոնկրետ ֆինանսական կամ իրավական պարտավորություն:

6. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրման օրվանից: Հուշագիրը կնքվում է անորոշ ժամկետով և գործում է այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից որևէ մեկը մյուս Կողմին գրավոր չի տեղեկացնում դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Այս դեպքում Հուշագրի գործողությունը դադարեցվում է մյուս Կողմի կողմից ծանուցումը ստանալու օրվանից վեց ամիսը լրանալուց հետո:

7. Սույն Հուշագիրը ստորագրված է Պոլյարնիե Զորի քաղաքում «09» հունիսի 2022թ. երկու օրինակից յուրաքանչյուրը ռուսերեն և հայերեն լեզուներով, որոնք ունեն նույն իրավաբանական ուժը:

- проводят совместные мероприятия, в том числе презентации, конференции, семинары;
- организуют участие в выставочно-ярморочных мероприятиях, проводимых на территории Сторон.

4. Стороны осуществляют информационное взаимодействие в соответствии с предусмотренными настоящим Меморандумом направлениями деятельности.

5. Настоящий Меморандум не налагает ни на одну из Сторон никаких конкретных финансовых и юридических обязательств.

6. Настоящий Меморандум вступает в силу со дня его подписания. Меморандум заключается на неопределенный срок и действует до тех пор, пока одна из Сторон не уведомит в письменной форме другую Сторону о своём намерении прекратить его действие. В этом случае действие Меморандума прекращается по истечении шести месяцев со дня получения уведомления другой Стороной.

7. Настоящий Меморандум подписан в городе Полярные Зори «09» июня 2022 года в двух экземплярах, каждый на русском и армянском языках, имеющих одинаковую юридическую силу.

Глава муниципалитета Мецамор
Մեծամոր համայնքի ղեկավար
В.А. Хачатрян
__________________ Վ.Ա. Խաչատրյան

Глава города Полярные Зори
Պոլյարնիե Զորի քաղաքապետ
М.О. Пухов
__________________ Մ.Օ. Պուխով